



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

«26» «դեկտեմբեր» 2019 թ. № 752-ՂԻ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Նշանակել ծառայողական քննություն անձնակազմի կառավարման բաժնի պետ Մ. Բաբայանի կողմից «Մուշեղ Մուրադյանին պաշտոնում նշանակելու մասին» հրամանում թույլ տրված վրիպակի դեպքով :

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) Շրջակա միջավայրի նախարարի «Մուշեղ Մուրադյանին պաշտոնում նշանակելու մասին» հրամանում ժամկետի վերաբերյալ թույլ տրված վրիպակի պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով.

1) Աշոտ Ավալյան - գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,

2) Նաիրա Ալավերդյան - քարտուղարության պետ,

3) Արմինե Հովհաննիսյան – իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 3 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժապետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

12/26/2019

X

ՎԱՅԵ ԶԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

«26» *հունիսի* 2019թ.
ք. Երևան